Վահան Թոթովենց

Թոմ

1

Թոմը մեզ մոտ եկավ Միացյալ Նահանգների հարավային քաղաքներից:Նա լսել էր, որ հյուսիսում մարդիկ ավելի սառն են, բայց ավելի բարյացակամ դեպի «գունավոր» մարդիկ:

Հյուսիսում առաջին օրն իսկ նա ընկավ մեր միջավայր: Մենք օտարականներ էինք, մեր մեջ չէր վառվում դեպի սևամորթներն ամերիկյան սպիտակների ատելության հուրը:

Մենք Թոմին ընդունեցինք եղբայրաբար: Նա ծառայող դարձավ արևելյան գորգի մեր վաճառատան մեջ, ուր մենք էլ ծառայողներ և բանվորներ էինք: Երբ առաջին օրը Թոմին հարցրինք հարավից հազար ու մի նեղություններով դեպի հյուսիս փախչելու պատճառները, նա չասաց: Թոմը դեռևս կասկածում էր մեր մասին: Նա կարծում էր, որ արևելցի սպիտակամորթներն էլ կունենան որոշ նախապաշարումներ դեպի նեգրը:

Սկզբում մենք հեգնությամբ վերաբերվեցինք Թոմի կասկածներին: Թողեցինք, որ մեր ներքին զգացումների դեմքը, և Թոմն իսկապես մեզ ընդունի իբրևիր եղբայրները:

Մի օր ես նրան ասացի.

Թո՛մ, լավ լսիր, մի՞թե դու կարծում ես, որ ես և դու տարբեր ենք իրարից:

Այո, կարծում եմ, պատասխանեց Թոմը:

Ինչո՞ւ, ի՞նչ տարբերություն կա:

Թոմը ծիծաղեց: Նա կարծեց, որ ես նրան ձեռք եմ առնում Նրա ծիծաղի ներքին իմաստն այդ էր: Ասա, ինչո՞ւ:

Պարզ է, դու սպիտակ ես, ես՝ սև:

Այս անգամ ես ծիծաղեցի:

ՉԷ՞ որ ես և դու միևնույն աշխատանքն ենք կատարում այս գորգի վաճառատան մեջ, չէ՞ որ միևնույն փոշին ենք կուլ տալիս, միևնույն ծանրությամբ գորգեր ենք շալակում, միևնույն մութ նկուղում գորգ ենք լվանում և միևնույն ռոճիկն ենք ստանում: Աշխատանքից ստացած վարձատրությունն է, որ մեզ դարձնում է միևնույն դասակարգի մարդը. իմ սպիտակ մորթին ինձ ոչ մի առավելություն չի տալիս: Թոմի աչքերը փայլատակեցին: Նա զգաց, որ չէր կարող խուսափել իմ խոսքերից, բայց պատասխանեց.

Հարավում այդպես չէ, հարավում սպիտակ գույնը մարդուն դարձնում է ազնվական, առանձնաշնորհյալ, սպիտակ գույնը մինչև անգամ մարդուն խելոք է դարձնում:

Ճիշտ է, հարավում այդպես է, բայց հարավի այն սպիտակները, որոնք աշխատում են ուրիշների համար, պիտի գիտակցեն մի օր:

Թոմը կամաց-կամաց խորագույն վստահությամբ լցվեց դեպի ինձ և իմ ընկերները: Մենք նրան հաճախ տանում էինք դասախոսությունների: Որովհետև նա միշտ մերժում էր գալ մեզ հետ սպիտակների թատրոնը, մենք էինք գնում նեգրերի թատրոնն իր հետ:

Թո՛ւմ, մի օր դիմեցի նրան, դու մեզ չպատմեցիր, թե ինչո՞ւ հարավից փախար դեպի հյուսիս:

Այժմ կպատմեմ, ասաց Թոմը և հայտնեց, որ նա հարավից փախել էր Լինչի դատաստանից խուսափելու համար: Հարավցի սպիտակամորթներն ամբաստանել էին նրան, որ սիրահարվել է սպիտակ աղջկա վրա: Հարավցի սպիտակամորթները որոշել էին նրան Լինչի դատաստանին ենթարկել:

Դու սիրո՞ւմ էիր սպիտակամորթ աղջկան, հարցրի Թոմին:

Այո, սիրում էի, բայց ես այդ աղջկա հետ չէի խոսել անգամ, միայն ամեն օր կանգնում էի փողոցի վերևը, որպեսզի, երբ աղջիկն անցնի, տեսնեմ: Այս էր իմ բոլոր սերը, սպիտակամորթները նշմարել էին և որոշել էին ինձ հոշոտել: Ուրախ եմ, որ եկա հյուսիս, հանդիպեցի ձեզ, վերջացրեց Թոմը:

Ինչո՞ւ մեզ այնքան հավանում ես, հարցրի:

Չգիտեմ, կարծես դուք էլ սև եք, կամ կարծես ձեր մեջ ես էլ եմ սպիտակ:

Այո, մենք կա՛մ սև ենք, կամ սպիտակ բոլորս միասին, մենք սոցիալական միևնույն շերտն ենք կազմում, մարդկանց մեջ տարբերության դնողը մորթը չէ, այլ...

Ես ձեզ հասկանում եմ, պատասխանեց Թոմը և չթողեց, որ շարունակեմ:

Բայց Թոմի մեջ կար մի միտք, որ արմատացած էր մինչև նրա հոգու խորքը: Նա միշտ կրկնում էր.

Քո բոլոր ասածները ճիշտ են, բայց մի բան շատ սխալ է:

Ո՞րն է այդ:

Այն, որ ասում ես, թե մարդասիրություն չկա, ամեն բան տնտեսական երևույթների արդյունք է, բայց կա մարդասիրություն, մարդասիրությունը տնտեսական երևույթների հետ կապ չունի:

Ես հեգնորեն ծիծաղեցի:

Թոմը զայրացավ: Իմ բերած բոլոր օրինակների դեմ նա հանդիսավոր կերպով հայտարարեց.

Ապա Լի՞նքըլնը, մի՞թե Լինքըլնը մարդասեր չէր:

Դու մատնանշեցիր մի անուն, որով կարելի է պարզաբանել ամեն բան:

Թոմը քիչ մնաց իրեն կորցներ Լինքըլն և ոչ մարդասեր որևէ սևամորթ կարող էր խելագարվել:

Ես նրան անմիջապես հանգստացրի.

Լինքըլնը մեծ մարդ է, և ամբողջ մարդկությունը երախտագիտությամբ պետք է հիշի նրա անունը, բայց տրամաբանությունդ չպետք է կորցնես, որպեսզի ամեն ինչ հասկանաս:

Ես Թոմին տվի մի փոքրիկ բրոշյուր և խնդրեցի նրան ուշի ուշով կարդալ այն և հետո լսել ինձ:

Շատ լավ, կկարդամ:

Այդ գիրքը թվարկում էր Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի պատճառները: Երբ Թոմը գիրքը վերջացրեց և ետ բերեց, ես ասացի նրան.

Տեսնո՞ւմ ես, Լինքըլնը մեծ մարդ լինելուց չի դադարում, բայց սևերի ազատագրության պատճառն երբ տնտեսական են, սևերը տնտեսական պատճառներով են ազատագրվել և ոչ թե մարդասիրական պատճառներով:

Ճիշտ է, ճիշտ է, պատասխանեց Թոմը:

2

Թոմը կամաց–կամաց խորացավ սոցիալական գիտությունների մեջ. նրա համար, ամենից առաջ, պարզ եղան դասակարգերը և դասակարգային կռվի էությունը:

Բայց Թոմն իր սոցիալական գիտությունների ամբողջ պաշարը գործադրում էր մի բանի հաստատման.

Ուրեմն ինչո՞ւ ես իրավունք չունենամ սիրելու մի սպիտակ և աղքատ աղջկա:

Իհարկե իրավունք ունես, ես հայտարարում էի անկեղծորեն:

- Ապա ինչո՞ւ, ինչո՞ւ... Թոմը չէր կարող շարունակել, հուզվում էր և լաց լինում: Արցունքի կաթիլները գլորվում էին նրա սև և փայլուն այտերի վրայից:

- Նա սիրո՞ւմ էր քեզ:

- Ի՞նչ իմանամ, ես նրա հետ չեմ խոսել, ես նրան միայն տեսնում էի:

Տիրում էր լռություն:

- Ես խղճում էի այս երիտասարդ սևամորթին, որի սիրտը տոչորվում էր սիրուց՝ ինչպես անապատի անջուր բույսը:

- Գիտե՞ս, ասում էր Թոմը, նրա մարմինն այնպես սպիտակ էր, կարծես հաց լիներ: Մի անգամ, երբ նա ունիվերսալ խանութում գնումներ էր անում, ես մոտեցա նրան, այնքան մոտ էի ես նրան, այնքան մոտ, որ հոգիս ճնճղուկի պես թռչկոտում էր: Նրա մարմնի բուրումը նման էր լողացած մանկան մարմնի բուրումին: Նա մի անգամ ինձ նայեց, ես կորսվեցի նրա աչքերի օվկիանում:

- Թո՛ւմ,– ասացի նրան, մոռացիր այդ բոլորը: Եթե իրականություն չիներ, կարող էի մոռանալ, բայց այդ բոլորը երազ է, և չեմ կարող մոռանալ. երազն ավելի է հզոր, քան իրականությունը:

3

Հյուսիսում Թոմը հետզհետե ձեռք բերեց արժանապատվության զգացում: Հարավում նրա ամբողջ սոցիալական պահանջն է եղել այն, որ մարդիկ ֆիզիկական ցավ չպատճառեն իրեն, մնացած բոլոր ցավերը, վիրավորանքները արժեքից զուրկ են եղել:

Բավական էր, որ չծեծեին և կախ չտային ծառից,– ասում էր Թոմը, մնացած բոլոր հայհոյանքներն ի՞նչ արժեին...

Բայց Թոմը հետզհետե զգաց, որ մարդկային իրավունքն ավելի անսահման էր, քան ինքը և իր ցեղը հարավում հավատացել էին:

Թոմը կառուցեց արժանապատվության խոր զգացում, այդ խնդրում նա ավելի զգայուն դարձավ, քան մենք՝ սպիտակամորթներս: Թոմն սկսեց ապրել հզոր, բոցավառ մի ռեակցիա. ամենափոքրիկ անոթագրություն դեպի իր անձը նրան լցնում էր ցասումով, գազանացած փայլփլում էին նրա աչքերը: Նա չափազանց զգույշ էր նաև այն բանից, որ չլինի թե մի որևէ փոքրիկ առիթ տա ուրիշին իրեն վիրավորելու, որովհետև՝

Տեղնուտեղը կտոր-կտոր կանեմ,– ասում էր նա:

Ես հրճվանքով դիտում էի, որ Թոմը կորցնում էր իր ցեղային ստրկության ավանդական սպիները:

Թոմը միաժամանակ չափազանց հարգալից էր դեպի իր ընկերակիցները, որովհետև նա համոզվեց, որ իրենց փրկությունը պիտի լիներ սոցիալական հողի վրա:

Թոմը նախ և առաջ թողեց սևերին հատուկ պարգևներ ստանալու սովորությունը:

4

Մի օր, երբ գորգի վաճառատան սպիտակամորթ գանձապահը Թոմին ռոճիկ էր տալիս, 5 սենտի մանր չլինելու պատճառով, գանձապահն ասաց.

Այդ 5 սենտը քեզ:

Թոմի աչքերը փայլատակեցին, նա նայեց գանձապահի աչքերին և ատամներով կծեց շրթունքները:

Գանձապահը ոչինչ չհասկացավ:

Քեզ թող լինի, մեծ փող չէ:

Մեծ փող չէր, բայց նեգրին 5 սենտ տալու սպիտակամորթ գանձապահի բավականությունը կտրատում էր նեգրին էլեկտրական հոսանքի նման:

Ոչ մի սենտ չեմ ընդունի իբրև պարգև, ասաց Թոմը և լռեց:

Այդ լռության մեջ զայրացած մի գազան էր շղթայված:

Ես անմիջապես գրպանիցս հանեցի 5 սենտ և տվի Թոմին:

Տուր գանձապահին, ասացի, դու հետո ինձ կտաս:

Թոմը 5 սենտը հանձնեց գանձապահին և հեռացավ:

Գանձապահը, որ գորգավաճառի լակեյն էր, սուր-սուր նայեց ինձ և գոռաց.

Կամաց-կամաց լրացնում եք այդ կեղտոտ նեգրերին:

Իհարկե, քեզ դուր չի գա, որ մարդիկ արժանապատվություն ունենան:

Արժանապատվությունս ո՞րն է, ավելի 5 սենտը ա՞չք կծակի:

Այո, կծակի, ավելի լավ է դու մտածես, թե ինչպես պետք է անել, որ բոլորս էլ ստանանք այն, ինչ արտադրում ենք, և ոչ թե 5 սենտ ավելի տաս իբրև ողորմություն:

Տիրեց լռություն: Ես զգացի, որ գանձապահի համար շատ հարց էի հարուցել: Նա մեքենայի վրա սկսեց գումարներ անել, իսկ ես դուրս եկա փողոց:

Լույսերը վառվում էին երկար, լայն, հարուստ և ցոփակյաց փողոցում: Ես մի սյունի տակ կանգնած՝ միտք էի անում, երբ մի աղջիկ մոտեցավ ինձ, ժպտաց և կանգնեց: Նայեցի նրա աչքերին և հասկացա նրան: Ժամանակ չունեմ, ասացի:

Տրտմությունը լավ բան չէ, պատասխանեց աղջիկը:

Երեսս շուռ տվի: Նա հայհոյեց և կորսվեց ցոփակյաց փողոցում:

Դեռևս երկու քայլ չէի արել, երբ Թոմը դեմս ցցվեց:

Բերի քո 5 սենտը, ասաց:

Փողն առնելուց հետո՝ առաջարկեցի Թոմին գնալ և գարեջուր խմել:

Գնանք, համաձայնեց Թոմը:

Մենք մտանք մոտակա գինետունը:

Երկու գարեջուր, ասացի մատուցողին:

Մատուցողը բերեց միայն մի բաժակ գարեջուր և դրեց իմ առաջը:

Ես երկու բաժակ խնդրեցի, ասացի մատուցողին:

Մենք սևամորթին չենք ծառայի, պատասխանեց մատուցողը և հեռացավ:

Թոմը ժամանակ չտվեց ինձ, որ մի բան անեի, անմիջապես աճապարեց մատուցողի ետևից:

Պարոն, ասաց Թոմը, դուք ինձ անպատվեցիք:

Հենց ուզում էի անպատվել, պատասխանեց մատուցողն ամենացինիկ տոնով:

Համեցեք փողոց,– առաջարկեց Թոմը:

Այլևս ուշ էր միջամտել Թոմի աչքերը փայլում էին՝ ինչպես մութի միջից լուսարձակին նայող գազանի աչքերը:

Ես քեզ հետ չեմ զիջանի կռվել, պատասխանեց մատուցողը և սկսեց գոռալ «օգնություն»: Գինետան սպիտակամորթները հավաքվեցին: Թոմը բոլորին բացատրեց, թե ինչ է պատահել: Սպիտակները լռեցին: Ոչ ոք չարտահայտվեց: Ներսից եկավ գինետան տերը և հրամայեց Թոմին դուրս գալ գինետնից: Թոմը

մերժեց դուրս գալ և էլի առաջարկեց մատուցողին փողոց գալ մենամարտելու: Գինետան տերը հայհոյեց Թոմին: Թոմը արձակեց իր զայրույթի շղթաները և դուրս քաշեց գրպանից իր ածելին: Երբ Թոմն ածելին դուրս քաշեց, սպիտակները բոլորն էլ քաշվեցին: Թոմը կանգնած էր գինետան մեջտեղը, փայլատակում էին երկու բան՝ նրա զայրացած աչքերը և ածելին: Մատուցողը փորձեց փախչել, բայց Թոմը նետեց ածելին նրա վզին, արյանը ողողեց նրա սպիտակ բլուզը: Երբ սպիտակներն առան գետին ընկած Թոմի ածելին, Թոմը գրպանից մի ուրիշը դուրս բերեց և սպառնաց շպրտել որևէ մեկի երեսին: Սպիտակներից մեկը մոտեցավ հեռախոսին, Թոմը հարձակվեց, քաշեց հեռախոսի թելը, կտրեց և ածելին ձեռքը՝ կամաց-կամաց նահանջեց դեպի դուռն ու կորսվեց բազմամարդ փողոցում:

Բորորը մոտեցան ինձ և նրա հասցեն հարցրին:

Չգիտեմ, ասացի ես, նրան պատահաբար հանդիպեցի փողոցում:

1928 թ.